Բազմաբնակարան բնակելի շենքերի համալիրի կառուցման ներդրումային ծրագիր

Ծրագրի նկարագիրը

Ծրագրի նպատակն է ՀՀ կառավարության «Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի» շրջանակներում Արաբկիր վարչական շրջանի Ադոնց փողոցի 6/1 հասցեում կառուցել Երազ բնակելի թաղամաս, որը բաղկացած կլինի երեք բազմաբնակարան շենքային համալիրներից: Համալիրներից յուրաքանչյուրում նախատեսվում է բնակելի հատված, հասարակական մասնաշենք, ստորգետնյա ավտոկայանատեղեր:

Տեխնիկական ցուցանիշներ

Առաջին համալիրը բաղկացած է 7 բնակելի և 1 հասարակական մասնաշենքերից: Համալիրում նախատեսվում է թվով 330 բնակարան, ստորգետնյա ավտոկայանատեղի՝ նախատեսված շուրջ 310 ավտոմեքենայի համար:
Ընդհանուր շինարարական մակերեսը կազմում է 52 000 քմ:

Երկրորդ համալիրը բաղկացած է 5 բնակելի մասնաշենքերից և հասարակական տարածքներից: Այստեղ նախատեսվում է թվով 218 բնակարան, շուրջ 200 ավտոմեքենայի համար նախատեսված ստորգետնյա ավտոկայանատեղի:
Ընդհանուր շինարարական մակերեսը կազմել է 35 000 քմ:

Երրորդ համալիրը բաղկացած է 6 բնակելի մասնաշենքերից, որտեղ նախատեսվում է թվով 323 բնակարան, շուրջ 320 ավտոմեքենայի համար նախատեսված ստորգետնյա ավտոկայանատեղի և հասարակական տարածքներ: Ընդհանուր շինարարական մակերեսը կազմել է 48 000 քմ:

Ծրագրի ժամկետներ

Առաջին համալիրի շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2016թ. դեկտեմբերին, երկրորդ համալիրինը՝ 2018թ. դեկտեմբերին, իսկ երրորդ համալիրինը՝ 2019թ. մարտին:

Ծրագրի արժեքը

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 45 մլն ԱՄՆ դոլար:

Ներդրումների

Պետություն–մասնավոր հատված համագործակցություն: Ներդրումներն իրականացվում են «Միկշին» ՍՊԸ կողմից:

ձևը և հիմնական պայմանները	
Ներկա իրավիճակ	Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են: